«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
ֆ.գ.դ., պրոֆեսոր
Ղ.Ս. Ավետիսյան
«07» հունիսի 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

Հովհաննես Ռազմիկի Կարապետյանի «ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի տնտեսամաթեմատիկական գնահատումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.08 – «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Մաթեմատիկական մեթոդները և տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտության մեջ և բիզնեսում» ամբիոնի 2022 թվականի հունիսի 07-ի նիստում (արձանագրություն թիվ 11/21):

Մասնակցում էին՝
Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ավետիսյան Անի Գրիգորի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Մաթեմատիկական մեթոդները և տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտության մեջ և բիզնեսում» ամբիոնի վարիչ, **Պետրոսյան Իրինա Բորիսի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության» ամբիոնի վարիչ, **Հակոբյան Տիգրան Աժդահակի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Մամասախլիսով Եվգենի Շամիլի, ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Իրինա Գրիգորի՝** դասախոս, **Իսկանդարյան Դավիթ Սամվելի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Սահակյան Դավիթ Ալբերտի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Մանուկյան Լուսինե Արմենի՝** դասախոս, **Պողոսյան Մանե Կարենի՝** դասախոս, **Իգիթխանյան Անուշ Սեյրանի՝** ավագ դասախոս, **Կարապետյան Արկադի Գագիկի՝** դասախոս, **Մխիկյան Դիանա Վարդանի՝** ասիստենտ, **Սահակյան Մարիա Արմենակի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի անհավասարության գնահատման նպատակով բազմաթիվ ուսումնասիրություններ են անցկացվել Ազգային վիճակագրական ծառայության և Համաշխարհային բանկի կողմից: Տնտեսական վերլուծաբանները և տնտեսական քաղաքականություն մշակողները առանձնացնում են եկամուտների և ծախսերի բաշխման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման երեք հիմնական պատճառ:

Առաջին պատճառը պայմանավորված է բնակչության եկամուտների և ծախսերի օրինաչափությունները հասկանալու ցանկության հետ և պարզելու, թե դրանք ինչպես են կախված սոցիալական տարբեր խմբերի հետ:

Երկրորդ հիմնական պատճառը արտացոլում է տնտեսական քաղաքականություն մշակողների մտահոգությունը՝ գնահատելու ինչպես համընդհանուր, այնպես էլ նպատակային գործողությունները, որոնք իրականացվում են տարբեր սոցիալական խմբերի հետ:

Երրորդ հիմնական պատճառը ուսումնասիրություններ են, թե ինչպես են բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումների տարբեր օրինաչափություններն ազդում ընտանիքների բարեկեցության և մարդկանց՝ տարբեր ապրանքներ ձեռք բերելու վրա, որպեսզի բավարարեն իրենց կարիքները: Դրանց մեջ են մտնում աղքատությունը, սպառողի վարքագիծը և այլն:

Գլոբալ անհավասարության խորացման պայմաններում էլ ավելի արդիական է դառնում բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումների ուսումնասիրությունները: Գլոբալ անհավասարության հետ մեկտեղ, անհավասարության մակարդակը խորանում է նաև Հայաստանի Հանրապետությունում: Եթե մինչև 2008 թվականը բնակչության եկամուտների և ծախսերի անհավասարության մակարդակը ուներ նվազման միտում, ապա դրանից հետո այն սկսել է աճել: Անհրաժեշտություն է առաջանում հասկանալ, թե անհավասարության աճը ինչով է պայմանավորված և ինչ գործոններ են ազդում դրանց վրա: Շատ կարևոր է գնահատել յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը

անհավասարության վրա, որպեսզի հնարավոր լինի բարձրացնել սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունավետությունը: Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության որդեգրած ուղղություններից շատ կարևոր է եկամուտների և ծախսերի անհավասարության և աղքատության կրճատմանը միտված քաղաքականությունը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել դրանք բազմակողմանիորեն, վերհանել տարբեր գործոնների ազդեցության ուժգնությունն ու ուղղությունը:

Այսպիսով, ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերոնշյալ հիմնավորումներով և պնդումներով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության բնակչության եկամուտների և ծախսերի անհավասարության գնահատումը, նրանց բաշխման տնտեսամաթեմատիկական մոդելավորումը՝ առավել նշանակալի գործոնների ուսումնասիրության միջոցով: Այդ նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են են հետևյալ խնդիրները՝

- ✓ ուսումնասիրել բնակչության եկամուտների և ծախսերի էությունն ու կառուցվածքը,
- ✓ ուսումնասիրել բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման վերաբերյալ տարբեր տնտեսագետների կողմից առաջ քաշված մոտեցումներն ու մեթոդները,
- ✓ ուսումնասիրել և վերլուծել համաշխարհային պրակտիկայում բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման հետազոտության մեջ իրականացվող տնտեսամաթեմատիկական մեթոդները և մոդելները,
- ✓ վեր հանել այն գործոնները, որոնք ազդում են բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարության վրա և բացահայտել նրանց առանձնահատկությունները,

- ✓ գնահատել Հայաստանի Հանրապետությունում բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարության վրա ազդող հիմնական գործոնների ազդեցությունը, նրանց ուղղությունը և չափը,
- ✓ կանխատեսել Հայաստանի Հանրապետությունում բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարության մակարդակները:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսությունում առաջադրված խնդիրների լուծման նպատակով կատարված վերլուծությունների արդյունքները ունեն տեսական և գործնական նշանակություն, որոնցից գիտական նորույթ են հանդիսանում հետևյալները.

- ✓ Ֆիլդսի և ՋՄՓ մեթոդների օգնությամբ սինթեզված նոր մեթոդի և անհավասարության ինդեքսների օգնությամբ գնահատվել է Հայաստանի Հանրապետության եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարության վրա ազդող գործոնների ազդեցությունը ինչպես ժամանակի տարբեր պահերին, այնպես բնակչության տարբեր խմբերի միջև:
- ✓ Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի սպասումների բյուջետային և թիրախային սցենարների հիման վրա կանխատեսվել է Հայաստանի Հանրապետության եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարությունը: Կանխատեսումներն իրականացվել են հաշվի առնելով եկամուտները և ծախսերը բնութագրող գործոնների էլաստիկության մակարդակները:
- ✓ Առաջարկվել է բնակչության եկամուտների և ծախսերի ուսումնասիրության համար օգտագործվող տնտեսամաթեմատիկական մեթոդների նոր դասակարգում, որ բաղկացած է հետևյալ խմբերից՝ անհավասարության գործակիցներ և հարաբերակցություններ, անհավասարության ինդեքսներ, միկրոտնտեսական հետազոտության մեթոդներ, մակրոտնտեսական հետազոտության մեթոդներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունում տեղ գտած հետազոտության արդյունքներն ու եզրահանգումները և ներկայացված մոդելները հնարավորություն են տալիս գնահատելու բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարության մակարդակները ժամանակի տարբեր պահերին, ինչպես նաև սոցիալ-տնտեսական տարբեր խմբերի մարդկանց համար: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել կառավարության երկարաժամկետ քաղաքականության մշակման համար՝ թիրախավորված միջոցառումներ իրականացնելու և սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելու համար::

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 110 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Բնակչության եկամուտների և ծախսերի դասակարգումը» գլխում ուսումնասիրվել են բնակչության եկամուտների և ծախսերի էությունն ու կառուցվածքը, նկարագրվել են բնակչության եկամուտների և ծախսերի վերլուծության սկզբունքները:

Ատենախոսության երկրորդ՝ «Բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման գնահատման մեթոդաբանությունը» գլխում ներկայացվել են բնակչության եկամուտների և ծախսերի անհավասարության գնահատման մոտեցումները, անդրադարձ է կատարվել անհավասարության ինդեքսներին՝ մասնավորապես Ջինի գործակցին և էնթրոպիայի դասի այլ ինդեքսներին, ուսումնասիրվել են Ֆիլդսի եւ ՋՄՓ մեթոդները և նրանց սինթեզի միջոցով ստացված համընդհանուր մեթոդը:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ բնակչության եկամուտների եւ ծախսերի գնահատումը» գլխում ուսումնասիրվել են ՀՀ բնակչության եկամուտների ծախսերի բաշխման անհավասարությունը ինչպես անհավասարության ինդեքսների, այնպես էլ Ֆիլդսի եւ ՋՄՓ մեթոդների միջոցով: Այստեղ ուսումնասիրվել են ինչպես դինամիկ բաշխումները, այնպես բնակչության սոցիալական տարբեր խմբերի բաշխումները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են որոշ թերություններ, որոնց մեջ կարևորում ենք առանձնացնել հետևյալները՝

1. Ատենախոսության 2.1 պարագրաֆում հեղինակը ուսումնասիրել է բնակչության եկամուտների և ծախսերի անհավասարության գնահատման տնտեսամաթեմատիկական մոտեցումները: Ընտրվել և հաշվարկվել է Ջինիի գործակիցը՝ որպես լայն տարածում ունեցող և համեմատական բնույթ կրող համընդհանուր ինդեքս, միևնույն ժամանակ պարզ չի դառնում հետագա քայլերում Ֆիլդսի և ՋՄՓ մեթոդների և նրանց միջոցով սինթեզված համընդհանուր մեթոդի կիրառության առաջնահերթությունը:

2. Ատենախոսության 3.1 պարագրաֆում հեղինակը ներկայացրել է Ջինիի ինդեքսի համեմատություն Հայաստանի և այլ երկրների միջև, ներառելով հետխորհրդային և տարածաշրջանային երկրներ: Կարծում ենք, որ հետազոտության համար նշանակալի կլիներ համեմատվող երկրների ցանկում հիմնավորել և ներկայացնել նաև այնպիսիք, որոնք եկամուտների կառուցվածքով և տնտեսության այլ առանձնահատկություններով առավել մոտ են Հայաստանի Հանրապետությանը:

3. Ատենախոսության 3.3 պարագրաֆում հեղինակը գնահատել է ՀՀ բնակչության տարբեր խմբերի միջև առկա եկամուտների և ծախսերի բևեռացվածության մակարդակը, ինչպես նաև ուսումնասիրել և ներկայացրել դրա վրա ազդող գործոնները: Աշխատանքը կունենար նոր որակ, եթե հեղինակը որպես ամփոփում ներկայացներ նաև բևեռացման խնդրի լուծմանը միտված տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները:

4. Հեղինակը հաճախ է հղումներ կատարում դասագրքերին, ինչը այնքան էլ ընդունելի չէ ատենախոսության դեպքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Ռազմիկի Կարապետյանի «ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի տնտեսամաթեմատիկական գնահատումը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են յոթ գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով՝ **Հովհաննես Ռազմիկի Կարապետյանի «ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի տնտեսամաթեմատիկական գնահատումը» թեմայով** թեկնածուական ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.08 - «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Հայ-Ռուսական համալսարանի
էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Է. Մ. Սանդոյան**

Հայ-Ռուսական համալսարանի
Մաթեմատիկական մեթոդները և տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտության մեջ և բիզնեսում ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ա.Գ. Ավետիսյան**

Հայ-Ռուսական համալսարանի
Մաթեմատիկական մեթոդները և տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտության մեջ և բիզնեսում ամբիոնի դասախոս, տնտ. գիտ. թեկնածու՝ **Տ.Ա. Հակոբյան**

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ռ. Ս. Կասաբաբովա**